ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
Հ. ԿԱՐԱՊԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ 6ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան , Սասունցի Դավթի 2

« 14 » «01» 2015թ.
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի գրանցված կազմակերպություններին

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«Երևանի Հ. Կարապենցի անվան հ. 6 հիմնական դպրոց»** ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր կազմակերպության միջև կնքված <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները :

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել **ք. Երևան , Սասունցի Դավթի 2, «Երևանի Հ. Կարապենցի անվան հ. 6 հիմնական դպրոց »** ՊՈԱԿ , մինչև 2015թ հունվարի 26-ը, ժամը 13.00 : Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն, **ք. Երևան , Սասունցի Դավթի 2 «Երևանի Հ. Կարապենցի անվան հ. 6 հիմնական դպրոց »** ՊՈԱԿ -ի շենքում 2015 հունվարի 26 -ին ժամը 13.00 :

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը : Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ 6ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով,ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը ՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,.

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն, որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալները:

-Առդիր 14թերթ

Հարգանքներով <<Երևանի Հ. Կարապենցի անվան հ. 6 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ տնօրեն՝

Ս. Վարդանյան